



ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



(Ա. ՏԱՐԻ)


15 ՕԳՈՍՏՈՍ 1900

(ԹԻԻ 11)



ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սասուն, Երուսաղ Սրմաբէշխանքան. — Վարձաւելի եւ պատճի գիտնակ, Վահան Շահրիման. — Գիտակտն արձագանգ (7-ը), Յ. Ս. Փափաղեան. — Ֆիլիպէի կայ գաղութին ծագումը, Վահան Մանուէլեան. — Տամուս-Մանուս բաճայի բողոքը. — Յնար, Երուսաղ :



ՆՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Չ Ա Ի Ի Ղ

Կը հրատարակուի ունէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուկարիոյ համար տարեկան 10 ֆր., վեցամսեայ 5 ֆրանք :
Արտասահմանի » տարեկան 12 ֆր., վեցամսեայ 6 ֆրանք :
Ամերիկայի » » 2 1/2 տոլար

“ՉԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր :

Բաժնեգին, նամակ, յօդուած, լրագիր և գիրք՝ պէտք է
ուղղուին հետեւեալ հասցէին՝

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH
PENSIONNAT ARMENIEN
(Bulgarie) VARNA

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

Շարիղի մէջ յայտարարուելու համար խնդրուած հրատարակութիւնները պէտք է երկու օրինակ ըլլան :

Շ Ա Ի Ի Ղ

ՀԱՆԳԻՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

15 ՕԳՈՍՏՈՍ 1900

Թիւ 11

Ս Ա Ս Ո Ւ Ն



Նայրենիքի խորքէն մինչեւ
օտարութեան հեռաւոր
անկիւններուն մէջ ապրող
հայր միեւնոյն ցնցումը, միեւնոյն
սարսուռը զգացած պիտի ըլլայ՝
յանկարծ իր ականջին աակ դար-
ձեալ հնչուիլը լսելով սա անուան .

Սասուն . . .

Ասկէց վեց տարի առաջ՝ այս
միեւնոյն անունը տակնուվրայ ըրաւ
քաղաքակիրթ աշխարհը և դեռպա-
նագիտութիւնը : Այդ անունով՝
արեան առաջին կաթիլը պաշտօնա-
պէս կերթար ցայտել քաղաքակա-
նութեան սեղանին վրայ՝ հայկա-
կան ինդիլը բոլորովին նոր շրջանի
մը մէջ դնելով : Արեան այդ կաթի-
լով էր նաեւ որ պատմութեան մէջ
վիմառառուեցաւ վիթխարի մար-
դասպանին անունը , ու տար քով
ոճրագործ դիւանագիտութեան մը
բոլոր զարհուրանքը :

94 թուականն ենք կարծես : Վեց
տարուան ահռելի շրջանը զոր բո-
լորեց հայր թիւնը նմանը չտես-
նուած տագնապներու մէջ , իբր թէ
ջնջուած ըլլար մեր կեանքին աւեռ-
դութենէն , կամ մոռցուած ըլլար
իբրեւ ո ս է աննշան ժամանակա-
միջոց մը սզգերու կեանքին մէջ :

Սասուն կոտորածներուն նախա-
դուռը եղաւ ասկէց վեց տարի ա-
ռաջ . արդեօք հիմակ նորէ՛ն Սա-
սուն սահմանուած է նախագուռը
ըլլալ ապագայ նմանօրինակ կոտո-
րածներու : Ախտանշանները գրեթէ
նոյն են . իսկ երեւոյթները չափէն
աւելի նպաստաւոր : Վեց տարի ա-
ռաջ Եւրոպան իր կուրծքին վրայ
այնքան բեռ չունէր որքան այսօր :
Ան առեն աւելի ազատ էր իր շար-
ժումներուն մէջ . դեռ Չինաստանը
եկած չէր դիւանագիտութեան
գորդեան հանգոյցը աւելի կնճռու-
տելու : Եւրոպական տէրութիւննե-
րը , հակառակ իրենց առերեւոյթ
խաբուսիկ համերաշխութեան , ամէն
ժամանակէ աւելի զինուած են ի-

բարու դէմ, ու իրարոյ շարժումներ կը գիտեն ահագին անվտանգութեամբ :

Սուլթան Համիտ որ իր արիւնաշաղախ գահոյքէն գիշեր ցորեկ կը գիտէ աշխարհի գործերուն ընթացքը , յարմար առիթը եկած սեպեց իր սիրական զբաղումին սկսելու նորէն . հայերը ջնջել : Եւ հին ծրարագիրը ձեռք առնուած է վերըստին , անոր գործադրութիւնը գըլըխ հանելու համար կէտ առ կէտ :

Ու զգուանք ազդելու աստիճան նոյնութեամբ վերսկսած են նաեւ դիւանագիտութեան խաղերը : Դեսպանները նօթա կը ներկայացնեն Դրան . Դուռը բոլորովին կուրանայ նոր կոտորածի մը պարագան . հայ աւազակներու յաւիտենական պատմութիւնը երեւան կելլայ . կառավարութիւնը օրինաւորապէս հալածած ու սպանած է եղեր երկրին փասակար մարդիկ : Բայց հիւպատոսական տեղեկագիրները բնաւ համաձայն չեն Դրան յայտարարութիւններուն : Դիւանագիտութիւնը մեքենան կը լարէ . նոր քննութիւն հարկաւոր է տեղոյ վրայ : Ու բոլոր այս գործողութիւններուն համար օրեր ու ամիսներ պէտք են . արեան հեռքերը պիտի ջնջուին . Սուլթան Համիտ պիտի քծնի , սողայ , կաշառէ , ու վերջապէս դարձեալ պիտի խորէ աշխարհը :

Եւրոպական մամուլը , ինչպէս ասկէց վեց տարի առաջ , ձայն կը

բարձրացնէ , հայկական կոտորածներու վերադարձի մը անլուր գայթակղութեանը դէմ բողոքելով :

Մարտն , բարիզեան մեծ թերթը , հետեւեալը կը գրէ իր օգոստոս 16 թիւին մէջ .

Օսմ . կառավարութեան համար ցաւալին հոն է որ այն պահուն ուր ինք հերքում կուղղէ անգլ . լրագրութուն , Փօռէն Օֆիսը իր Պոլսոյ դեսպանէն մանրամասն տեղեկագիր մը կընդունի Հայաստանի նոր ու քսամընելի դէպքերուն վրայ : Այս տեղեկագիրը հրատարակութեան տրուած չէ , ու չպիտի տրուի մինչեւ որ Լորա Սալզպրի , որ Ֆրանսա կը զբնուի , կարգայ զանիկայ : Սակայն վաւերական տեղեկութեանց համեմատ , տեղեկագիրը կը հաստատէ հետեւեալ իրողութիւնները .

Սասուն գաւառի Սեպալանք փոքր գիւղը , որ քսանը ութը տուն եւ երեք հարիւր բնակիչ ունէր , հիմնանայտակ կործանուած է կայսերական ջոխրներուն ձեռքով , եւ ա՛լ պատ մը կանգուն չի մնաց : Բոլոր բնակիչները անյայտացած են եւ անոնցմէ աւելի քան հարիւր դիակներ արդէն գտնուած են : Այս ջարդը տեղի ունեցած է յուլիսի երկրորդ կիսուն :

Սասունի եւ Տիարպէքիւրի գաւառին մէջ հարստահարութիւնները ու հալածանքները վերսկսած են ձիջի ինչպէս 1894ի ամենէն հրատապ օրերուն . վանքերու կողպտում , տղոց խոշտանգում , կիներու բռնաբարում եւայլն : Բոլոր այսք . Օսմ . իշխա-

նութեանց աչքին առջեւ, որոնք կը պահեն նոյն անդրդուելիութիւնը ինչպէս 1894 ին, եթէ չգործակցին նախարարականերուն հետ:

Փռէն Օֆիսը հրահանգներ տուեր է Նիքոլա Օքոնորի որպէս զի Ֆրանսական եւ ռուսական դեսպաններուն հետ համաձայնելէ ետք ազդուապէս բողոքէ Դրան՝ այս դէպքերուն դէմ եւ Սուլթանին ուշադրութիւնն հրաւիրէ այն ծանր անպատեհութեանց վրայ որոնք կրնան ծագիլ 1894 ի եղերական դէպքերուն ո եւ է մէկ կըրկնութիւնէն:

Արգարեւ պէտք է յուսալ որ եւրոպա բարբարոսութիւն չպիտի թոյլատրէ ինչպէս իր դուռներուն տակ նոյնպէս աշխարհի հեռաւոր մէկ անկիւնը:

Թան և ո նոյն թուականով խումբագրականի մը մէջ հայկական նոր կոտորածին առթիւ զիւսնադէտներու կոչման վրայ խօսելէ յետոյ կ'աւելցնէ .

Հարկ է սպասել կրկնակ քննութեան արդիւնքին, որուն կը ձեռնարկեն պետութեանց դեսպանները մէկ կողմէն, եւ Օսմանեան կառավարութիւնն ալ անշուշտ միւս կողմէն, դէպքերուն ծանրութեան վերայ վճիռ արձակելու համար: Բայց եթէ այդ դէպքերը մեծապէս չափազանցուած իսկ ըլլան առաջին տեղեկագիրներով, թուրք կառավարութիւնը դարձեալ սոսկալի պատասխատուութեան պիտի ենթարկուի եթէ այս կարգի արարքներ առանց հատուցման եւ առանց պատժի ձգէ:

Մաղթելի է որ եւրոպական տէրութիւնները անգամ մը եւս իրենց գործը չլքանեն Պոլսոյ մէջ՝ մոլորելով

ուրիշ աւելի ստիպողական եւ աւելի հեռաւոր հոգերէ, ոչ ալ խաբուին այնպիսի բացաարութիւններէ որոնք չափէն աւելի գործածուեցան:

*
* *

Ս.մէն պարագայի մէջ, սակայն, հայկական խնդիրը վերարժարժում մը կ'ստանայ, և դիւանագիտական աշխարհը կ'ստիպուի պայմանադրական ձեւերու աակ՝ զբաղիլ անով: Մեր կեանքին ու մեր գոյութեան հետ կապ ունեցող ամենէն աննշան դէպքերն իսկ վայրկեան մը դադարելու չեն բովանդակ ազգին ուշադրութեանը առարկայ դառնալէ: Սասունի նոր կոտորածը, զիւսնագիտական շրջանակի մէջ իր ստացած կարեւորութեամբը, այն կարգի դէպքերու հանգամանքը կ'ստանայ որոնք ընդհանրապէս ամբողջ ազգին, և մասնաւորապէս աղբային, յիշատիսութեան վարիչներուն զբաղման օրուան նիւթը դառնալու են:

Թուրքիոյ հայութիւնը՝ իր կաշկանդուած կացութեամբը՝ չի կըրնար ազատօրէն շարժիլ խելացի յանդգնութեամբ պաշտպանելու համար իր շահերը, անոր ներկայացուցիչ մարմինը, պատրիարք ու վարչութիւն, իրենց ապիկար ու վատթար կազմակերպութեամբը արամադ իր չեն կորովի և ուժգին ընթացք մը բռնելու ներկայ ծանրակշիռ պարագային մէջ:

Կը մնայ արտասահմանի հայութիւնը որուն առջեւ ո եւ է դժուար

րութիւն չի կանգնիր ազգին շահերուն պաշտպանութեան տեսակէտով: Եւրոպայի մէջ, գիւանագիտութեան քովն ի վեր, արաստամանի հայր աշտուրջ հսկողութեամբ պիտի հետեւի այն բոլոր հակամնքուն, միտումներուն ու արամագրբութիւններուն զորս գիւանագիտութիւնը պիտի ունենայ՝ Հայաստանի կոտորածներուն այս նոր ու արհաւիրաց սկզբնաւորութեանը հանդէպ:

Հահէի խաղաղութեան վեհաժողովին՝ արաստամանի հայութեան կողմէ եզած միահաղոյն զիմումը թէ և ո և է նիւթական հետեանք չունեցաւ, բայց անիկա ունեցաւ իր բարոյական մեծ նշանակութիւնը: Երբ հարստահարուած ազգ մը՝ դէմը ելած ո և է առիթի՝ իր իրաւունքները կը պահանջէ բարձրադասակ, միշտ հաւանականութիւն ունի ուշ կամ կանուխ ձեռք բերելու իր պահանջներուն գոհացումը, հակառակ վհատեցուցիչ դժուարութիւններուն որոնց պիտի հանդիպի շարունակ:

Միանգամ ընդ միշտ պէտք է հասկցունենք Սուլթան Համիտի թէ՛ պատրիարքական աթոռին վրայ իզմիրլեանի մը բացակայութիւնը ու Օրմանեանի մը ներկայութիւնը երբեք ազգը ետ չեն կեցուներ բողոքելու արիւննուշտ մարդասպանի մը դժօխային ծրագիրներուն դէմ:

Երուանդ Մումաբէխանլեան



ՎԱՐՁԱՏՐԵԼ ԵՒ ՊԱՏԺԵԼ ԳԻՏՆԱՆՔ



Մ. Ի. ի վերջին թիւերէն մէկուն մէջ հրատարակուած էր « Թրքահայ գրականութիւնը » վերնագրով յօդուած մը, Շաւարշ ստորագրութեամբ:

Նոյն նիւթին վրայ յառաջիկային գրելու խոստումով, առ այժմ քանի մը խորհրդածութիւններ պիտի ներկայացնեմ, քննադատութեան մասին յայտնուած կարծիքներէն թելադրուած: — Պ. Շաւարշ, շատ լուրջ նրկատողութեամբ մը, կը շեշտէ այն ճշմարտութիւնը թէ մեր մէջ որքա՛ն սխալ ըմբռնուած է սակաւին քննադատութիւնը, որ, ինչպէս կ'ըսէ, ամենէն նուիրական մասն է գրականութեան:

Դժգոհութիւն կը յայտնէ որ գործին տեղ անձը, ներքինին տեղ արտաքինը կը դատափետեն և գրողին անձնականութիւնը կ'ուզեն մէջ խառնել սովորաբար:

Շատ ճիշդ է: Վհատեցուցիչ ածումով մը շատցած են մեր մէջ կեղտոտութեան դժներես հերոսները, որոնք փոխանակ ո՛ր և է գործ, ո՛ր և է գրութիւն անկողմնակալ քննութեան ենթարկելու, ձրի բամբասանք և լիբը շարախօսութիւններ միայն կը տեղացնեն հեղինակի գլխուն՝ որպէս զի անձնական գոհիկ հաշիւ մը մաքրեն:

Ասիկա անհանդուրժելի է, զղուելի է:

Սակայն հարցում մը կը զարնէ մտքիս, թէ՛ կրնա՞նք գործիչի մը, հրապարակագրի մը անձը բողոքովին աննկատ թողուլ միշտ: Առ հասարակ ընդհանրացած կարծիք մըն է թէ

անհատ մը՝ ինչ որ ալ ըլլայ ան իր մասնաւոր կեանքին մէջ, բնաւ արհամարհելի չէ, երբ իր տաղանդի արգիւնքներով մեզի հիացում կը պատճառէ ու մեզ կ'ընծայէ գրուածքներ որոնք գրական ու գեղարուեստական սեսակէտով կրնան շատ մեծ արժէք ունենալ, մեր միաքը բանալ, մեր ճաշակը ազնուացնել:

Գործիչն ալ, հեղինակն ալ մարդ մըն է վերջապէս, կրնայ ունենալ իր թերութիւնները որոնց համար պէտք չէ, կ'ըսենք շատ անգամ, ուրանալ անոր բոլոր առաւելութիւնները: Իրաւացի է այս նկատողութիւնը, երբ մանաւանդ այդ թերութիւնները անհատին անձէն դուրս արձագանգ չեն գտներ եւ հանրային բարոյակաւորին հետ վերաբերութիւն մը չունին:

Հասարակութեան մը է'ն էական պարտականութիւնն է յարգել գիտնալ իր մէջ աճող կարողութիւններն ու արժանիքները: Իր անտարբերութիւնը, իր թշնամութիւնը դէպի ո'ր եւ է գործ կամ գործիչ, կարող է ամենավատթար հետեւանքներ ունենալ, կարող է ցրտացնել, վհատեցնել, ամուլ անգործութեան դատապարտել իր լաւագոյն ուժերէն շատերը:

Եւ թողունք թշնամութիւնը պէտք է աւելցնել որ մինչեւ իսկ պղատունական համակրութիւն մը ցոյց տալն ալ բաւական չէ. պէտք է վարձատրել, այսինքն՝ հզօր պաշտպանը, անկեղծ աջակիցը դառնալ այն անձերուն՝ որոնք իրենց խօսքով ու գործքով կ'առաջնորդեն մեզ դէպի ճշմարտութիւն, դէպի յաղթանակը մեր իղձերուն ու գաղափարներուն:

Ասոր ըսելիք չիկայ:

Բայց ի՞նչ ընելու է հասարակութիւն մը երբ իր մէջէն մէկը, մէկ

կողմէն աղուոր գրութիւններ կ'արտագրէ, խոչոր խոչոր խօսքեր կը նետէ, եւ միւս կողմէն՝ հրաժեշտ տուած պարկեշտ մարդու բոլոր յատկութիւններուն, իր գործերով ու ընթացքով արատ մը կ'ըլլայ իր ցեղին, եւ հրէշային օրինակ մը կը դառնայ տաղանդաւոր սրիկայութեան:

Ի՞նչ ընելու է, կը հարցնեմ, երբ՝ զոր օրինակ, կղերական մը, քրիստոնէութեան օծեալ ներկայացուցիչ մը, գթութեան եւ անձնուիրութեան տիպար նազովրեցիին անո՛ւչ ու գեղեցիկ պատկերին տակ պատարագ մատուցանելէն յետոյ, ճիւղային հեղնութեամբ մը անդին կ'երթայ իր ազգը կը մատնէ եւ շատերու բանտարկութեան ու թշուառութեան պատճառ կը դառնայ:

Ի՞նչ ընելու է:

— Ըստ իս հասարակութիւնը իր պարտաճանաչութեան է'ն գերազանց օրինակը տուած կ'ըլլայ միայն ա'ն ստե՛ն երբ բացարձակ մտացութեան կուտայ թէ՛ գրութիւնները եւ թէ՛ անձը անոր՝ որ իբրեւ հանրային գործիչ անուղղելի կերպով արատաւորուած է եւ իր բարոյական վարմունքով կը փճացնէ ամէն ազնուութիւն, ամէն սրբութիւն:

Եւ հասարակութիւն մը, ազգ մը չի կրնար մաքրուիլ, բարձրանալ մինչեւ որ չի սորվի պատժել, լքանել այն գործիչները կամ անձերը որոնք իրենց ապականութիւններով սղեղ, արատաւոր երեւոյթներ, կոիւններ ու ասելութիւններ կը ստեղծեն:

Բըքան պարտաւոր ենք լաւը քաջալերել, անոր դէմ աղտոտ դէնքեր չի գործածել, անձը չի խժժել, նո'յնքան եւ աւելի պարտական ենք վատը անխնայ հարուածել եւ պատժել:

Պէտք է հասկնանք վերջապէս, թէ բարիին թագաւորութիւնը հաստատելու համար չարը ոչնչացնելու աշխատիլ հարկ է նաև:

Դժբաղդարար — պէտք է քաջութիւն ունենանք խոստովանելու, — մեր ժողովուրդը դեռ շատ հեռու է իր հասարակական դատաստանն ունենալէ: Մենք ո՛չ վարձատրել գիտենք տակաւին, ոչ ալ պատժել. բան մը՝ որ կ'ապացուցանէ թէ գատնելու կարողութիւնն իս տկար է, բարոյական զգացումն իս ինկած է:

Ասոր համար է որ մեր չորս կողմը կը վիտան վատեր, որոնք անպատիժ կը փորձեն քանդել ամէն լաւ ձեռնարկ կամ գործ:

Այո՛, վարձատրել կամ պատժել չենք գիտեր: Եւ, ինչ որ աւելի ցաւալին է, մեր պարտականութիւնը յաճախ հակառակ կերպով կը գործադրենք: Շատ անգամ մեր ծոցին մէջ կը տաքցնենք այն ստուած օձերը, որոնց գլուխը ճգմիլ, տրորել հարկ էր: Ու անգին, մի՛ս մինակ, լքուած կը թողունք մեր անձնուրաց գործիչները:

Առ այժմ երկու թարմ օրինակ բաւական կը կարծեմ ըսածիս ճշմարտութիւնը ապացուցանելու:

Բացէք նոյն Մ...-ը, տեսէ՛ք, Շաւարշներու, Գալէմբեարեաններու, եւ ուրիշներու շարքին մէջ անվրդով բազմեր է հանրածանօթ Վահան վարդապետը՝ հէքեաթ մը գրելով: Ի՞նչ բան ունի հոն, Մ...-ի մէջ յայտնի դաւաճան մը, զոր պէտք էր եւ պէտք է դուրս վռնտել մեր բոլոր շրջանակներէն:

Անդին նայեցէ՛ք, Գողգոթային մօտիկ, Երուսաղէմի վանքին մէկ անկիւնը, գրեթէ անօթի, լքուած,

նետուած է Իզմիրլեանը, որ անձնուէր պարտաճանաչութեամբ, ազգին հաւատարիմ մնալու երդումը պահեց միշտ:


Չէի՞նք կրնար, եւ դեռ չե՞նք կրնար գոնէ նիւթական անձկութիւնը մոռցնել այդ երկաթէ պատրիարքին:

Մե՛ղք մեզի:

Ու այս երեւոյթը պիտի տեսէ, իր բոլոր ախրութեամբը, որքան ատեն որ մշտելական անտարբերութիւն մը պահենք դէպի լաւերն ու վատերը, որչափ ատեն որ չոյնք, քաջաբերենք ցած արարածները:

Չէ՛, վարձատրել ու պատժել դեռնանք, ա՛ս է մեր հասարակական պարտականութեանց է՛ն առաջինը: Վահան վարդապետներու հէքեաթներըն անգամ չի կարգանք, ու չի լքանենք նաև Իզմիրլեանները:

ՎԱՀԱՆ ՇԱՂԻՄՍԵ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Մ Ի Ս Ը

Միտք գրեթէ բոլոր ժողովուրդներուն գլխաւոր սնունդներէն մին եղած է:

Կան առողջարաններ որոնք վնասակար կը դռնեն միտի գործածութիւնը, բայց մեծագոյն մասամբ կրնդունին որ առանց միտի մարդ չկրնար ապրիլ:

Մենք միտը կուտենք տապկուած,

խորոված և խաշած վիճակներուն մէջ . հում միսը վերջերս ջերմապէս յանձնարարութեցաւ թոքախտաւորներու համար թէ՛ իբրեւ զրաւոր մուշկ և թէ՛ մանաւանդ իբրեւ գեղ և դարման թոքերու սկարու թեան օրտկան 600-750 կրամ չափով և կամ 1000-1500 կրամի քամուած ջուրը խմելով : Անոնք որ առանց թոքախտաւոր ըլլալու սկար կարծք ունին և արամադիր են հիւժախտի՝ պէտք է իբրեւ նախարգելիչ միջոց , լաւ տեսակ հում միս ուտեն :

Եթէ ըսեմ թէ միսին մէջ ազօթային , և այլն հանքային տարրեր կը գտնուին , իւրէն և ջուրէն զտա , նոր բան մը հաղորդած չպիտի ըլլամ , բայց կարծեմ քիչեր գիտեն թէ ո՞րն է լաւագոյն միսը , ո՞ր կենդանիինը և ի՞նչ տեսակ պատրաստութիւնը :

Առողջաբանները կըսեն թէ հատուկ կենդանիին միսը աւելի օգտակար է քան ահամերուներ : Մենք որ գառնուկի , հորթի և վառեակի միսերուն համար մասնաւոր հակում մը ցոյց կուտանք , կը սխալինք երբ կը կարծենք թէ անոնք պէտք եղած տարրը կը պարունակեն մեր սնունդին համար կամ աւելի համով և գիւրամարս են :

Եզին միսը որուն արիւնոտ , շատ կէկ և խնայողական հանգամանքը մեզ կը շլացնէ , նուազ անդարար համարուած է քան ոչխարինը : Բա-

րերախտարար արեւելքի ժողովուրդը աւելի կը սիրէ ոչխարին միսը քան եզինը , միայն թէ պէտք է որ ոչխարն ալ եզին նման լախտի հարուածով մը սպաննուի , որպէս զի անոր դիւտուոր աարբերէն մասունքներ արեան հետ գորս ելլելով չպակտին :

Թարմ միսը երբեք դիւրամարս չէ և արդէն փորձով ալ դիտենք որ շատ կարծր է . միսը ուտելու ենք այն տեսն երբ քիչ մը ժամանակ պահուած և կակուղցած է , միայն թէ պէտք չէ որ հասած ըլլայ կամ աարբաղաղ բուելու սկըսած , այսինքն ծանրացած ինչպէս կըսենք , վասն զի այդ պարագային մէջ մանրէներու զոյւթիւնը անվիճելի է և թունաւորուիլը անխուսափելի : Կենդանաբաններու կարծիքով կենդանիին սեռը կարեւորութենէ զուրկ է , սակայն արուն միշտ նախամեծար համարուած է արեւելքի ժողովրդեան կողմանէ , այն ալ ոչխարին համար և կենդանիին ողնայարին շուրջի միսին ամենէն աւելի անդարար և համով ըլլալը արդէն ամենուս ծանօթ է :

Տապկուած միսը խորովածէն նախընտրելի է , թէեւ այս վերջինը աւելի դիւրամարս կը կարծուի . իսկ խաշածը անպէտ աւելորդ ուտելիք մըն է և չարժեք որ ստամոքսնիս լեցունենք անով : Եթէ կան ծեծուած միս սիրողներ , պէտք է գիտնան որ անիկա դժուարամարս ըլ-

լալու յաակութիւնը ունի, բայց այն պարագային երբ ծամուի, ջուրը ծծուի և մնացորդը դուրս հաննուի:

Թէ ինչո՞ւ ձեծուած միտը գլխու արամարս կենթադրուի երբ մանրուած, փշրուած և արգէն պատրաստ է անմիջապէս մաքսուելու, աւոր պատ ասխանը թուքէն սպասելու է որ պիտի ըսէ ձեզ թէ՛ կերակուր մը որքան երկար ատեն ծամուի և իրմով (թուքով) խառնուի, այնքան դիւրամորս կըլլայ. ուրեմն թուքը մտրտողութեան մէջ մեծ գեր մը ունի ստամոքսի հիւթին հետ:

Քիչ աշխատած և լաւ անած կենդանիին միտը է՛ն յանձնարարելին է, բայց ի՞նչպէս գիտնալու է ատիկառավարական պաշտօնեաները միայն կրնան այդ կողմին վրայ հսկել երբ իրենց քննութեան կը յանձնուի կենդանի մը՝ զայն խողտողելու համար սպանդ անոց խրկելէ առաջ:

Միտին ջուրը առարկութիւն չը վերցնելու օգտակարութեան կողմանէ, բայց պէտք է որ իննամով պատրաստենք զայն: Գոց շիշերու մէջ ետիած միտին ջուրը այնքան համեղ և յանձնարարելի է որքան միտի փոշին զոր այսօր Եւրոպա մեծ խնամքով կը պատրաստէ և կարտածէ:

Ճամպօնը, տալամը և սոսնցնը ման նախապահուած միտերը երբեք յանձնարարելի չեն կրնար ըլլալ: Գերմանիոյ և Ֆրանսոյի մէջ առ-

րեկան 20000-25000 ձի կ'սպաննուի այդ միտերու պատրաստութեան համար և Ստամբուլ գիտէ թէ ի՞նչ պէս կը շինեն ու կը պահեն: Միտը պահելու համար հարկ է տղեր գործածել, ահա այդ աղերն են որ մտրդուն կը փետտեն և կը թունուտորեն, ինչպէս անսուսեցու վերջերս Բարիզի մէջ:

Միայն պահուած միտերէ չէ որ կրնանք թունուտորուիլ. թարմ միտերն ալ մեր գլխուն կը բերեն միեւնոյն փորձանքը կամ մանրէնէն կամ միտին մէջ գոյացած բարձրաշիւնէն և կամ մանուսանդ կենդանին հիւանդ վիճակի մէջ մտրթուելէն: Այս վերջին սովորութիւնը հաւերուն համար շատ գործածական է, սակայն պէտք է գիտնալ որ ամենէն վտանգաւոր բանն է որ կրնենք, վասն զի հիւանդ կենդանին չստակելու համար անմիջապէս կարուելէն ո՛չ հիւանդութիւնը կը բժշկուի և ո՛չ ալ անոր միտը փսաւ սակար ըլլալէ կը դադրի:

Հորթը որուն համար ըսի թէ օգտակար միտ մը չունի, միշտ վրտանդաւոր է, անոր միտը լուծողութիւն կուտայ և կարգ մը կենդանիի հիւանդութիւններու շատ եեթակայ կը համարուի:

Եղջերուի, կղնիկի միտը շատ անդարար է, իսկ թռչուններունը՝ ո՛չ: Գալով մտրդու միտին, չեմ կարծեր որ համով յաակութիւն մը ունենայ, թէեւ բարոյապէս մտր-

գու միս ուտելը երբեք մարտելի չէ
 և օր մը չէ օր մը ուտողը կը տու-
 ժէ, սակայն նիւթ ապէս . . . Վայրե-
 նինները կրնան այս մտաւն հարկ
 եղած տեղեկութիւնները առ կամ
 պէտք է հարցնել թրսմալալ գա-
 ցող անգլիացի սպաներուն սրտնք
 անդամ մը Բրէթորիաի մէջ մար-
 գու մը գիտիլը կերած են առանց
 զիանալու, շնորհիւ իրենց խոհա-
 րարապետին աշարջութեան :

Ժան Ֆաուէր որ կը պատմէ այս
 վերջի եղբրութիւնը և որ ինքն ալ
 մտանակցած է այդ մարգակերու
 թեան, կըսէ թէ թէեւ չեն կրցած
 կերած միտերնան ինչ ըլլալը հաս-
 կընալ, սակայն յայտնուելէն յետոյ
 այնպիսի զգուանք մը զգացած է որ
 մինչեւ Եւրոպա հասնիլը խոտակեր
 ըլլալ որոշած է :

Ուրեմն մարդու միս ուտելէ ըզ-
 գուշացէք ինչ որ ալ ըլլայ, թէ՛ նի-
 թ ապէս և թէ՛ մանաւանդ բարո-
 յապէս :

Յ. Ս. ՓԱՓԱՉԵԱՆ

Ֆ Ի Լ Ի Պ Է Ի

ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Պալքանեան երկիրներու մէջ հայ
 գաղթականութեան սկիզբը բաւական
 հին է :

Չ. դարէն սկսելով մինչեւ ժ. դար
 բիւզանդական կայսրներ, թէ՛ հայե-
 րու ուժը ակարացնելու համար

Փոքր-Ասիոյ մէջ եւ թէ՛ պալքանեան
 երկիրներու մէջ իրենց սահման-
 ները պաշտպանելու՝ Պուլկարիոյ եւ
 այլ ազգերու յարձակումներուն դէմ,
 պարբերաբար Հայաստանէն հոն վա-
 բած են հայ գաղութներ :

Հայերը իրենց բնածին գործունէ-
 ութեամբ ու հանճարով ինչպէս յաջո-
 ղեցան բիւզանդական կայսրութեան
 մէջ այնքան կարեւոր քաղաքական և
 զինուորական դերք եւ ուժ գրաւել,
 տասնեւչորս կայսրներ և բազմա-
 թիւ նշանաւոր զօրավարներ ընծայե-
 լով, բնական է որ այդ հին ժամա-
 նակները Պուլկարիոյ և Մակեդո-
 նիոյ մէջ ունեցան կարեւոր դերք, և
 մեր Ասողիկ պատմիչին նայելով՝ Դեբ-
 ջանցի կոմսաձագ կոչուած երկու եղ-
 բայրներ ժ. դարուն յաջողեցան ձեռք
 բերել Պուլկարիոյ արքայական դահլը,
 և երկիրը երկար ատեն պաշտպանել
 Վասիլ Բ. կայսեր արշաւանքներուն
 դէմ :

*
* *

Այս քաղաքական և զինուորական
 կրկին նպատակներով եղած հին գաղ-
 թականութիւններէն զատ կայ նաև
 ժ. դարուն մէջ Պաւլիկեան հայազգի
 աղանդաւորներուն գաղթումը,

Բիւզանդացի սպառնչները կաւան-
 զեն՝ թէ Յովհաննէս Չմշկիկ, հայազգի
 կայսրը 970ին՝ Յունաց Պոլսոյ պատ-
 բիարք Աստուածատուրի գրգմամբը
 և քիչ մըն ալ քաղաքական նպատա-
 կով այդ աղանդաւորները իրենց հայ-
 բերնիքէն բերաւ և բնակեցուց Ֆի-
 լիպէի մէջ :

Ասոնց մեծագոյն մասը ժամանակի
 ընթացքին մէջ օրթոսութիւնը ըն-
 գունելով ձուլուեցաւ տեղական տար-
 րին հետ, իսկ մէկ փոքրիկ մասը մը-

նաց իր ազանդին մէջ միշտ ատելով օրթոսոքս յոյներն ու պուլկարները :

Պաւղիկեաններու այս հատուածը վերջին դարերուն մէջ ընդունած է կաթոլիկութիւնը միշտ պահելով սակայն իր հին Պաւղիկեան անունը :

Այսօր այդ Պաւղիկեանները Ֆիլիպէի մէջ ուրիշ բան չեն բաց եթէ կաթոլիկ պուլկարներ, եւ թէ՛ն կիները իրենց զգեստներու հին տարազովը եւ քիչ մըն ալ զիմագծերու նրբութեամբ կը տարբերին պուլկարներէն, բայց իրենց լեզուին, սովորութիւններուն, բարքերուն, յիշատակներուն մէջ չիկայ բան մը որ հայազգի հին ազանդաւորները յիշեցնէ :

Անցողակի ըստ միայն որ Ֆիլիպէի կաթոլիկներու եկեղեցիին մէջ կայ հայկական մեծագիր պատկեր մը, սակայն անոր ալ յիշատակարանը ջրնջուած է, եւ որ անշուշտ հայ կաթոլիկի մը ձեւով հոն բերուած է :

Չենք կրնար Պուլկարիոյ մէջ գրտնուած ներկայ հայ գաղթականութեան ծագումը կապել ոչ Պաւղիկեաններու եւ ոչ ալ բիւզանդացիներու ձեռքով բերուած ուրիշ հին գաղթականութեանց հետ :

Անոնք կորսուած են անդառնալի կերպով, եւ այսօր ոչ մէկ հետք եւ ոչ մէկ փշրանք մնացած է անոնցմէ :

Ու ստիպուած պէտք է աւելի վար իջնանք ժԱ. գարէն՝ Պուլկարիոյ հայ գաղութին ծագումը փնտռելու համար : Բայց հոս ալ ահագին դժուարութիւններ կեղևն, մանաւանդ Պուլկարիոյ հարաւային մասին հայերուն համար : Ասոնք Ռումանիայէ՛ն գաղթած են թէ Լեհաստանէն եւ կամ Պոլսէն կամ Թրակիոյ ծովեզերքներէ՛ն հետզհետէ վեր բարձրացած են :

Գուցէ երկար ատեն այս դժուարութեանց առջեւ ենթադրութիւններու մէջ խղզուած մնայի, եթէ կարենոր դիւտ մը, թաղցուած գանձ մը չի լուսաւորէր զիս զէթ Ֆիլիպէի հայ գաղութին ծագմանը մասին :

Դեռ նոր սկսած էի սեղւոյն հայոց Ս. Գէորգ եկեղեցիին քարերու եւ պատկերներու արձանադրութիւններն ընթօրինակել եւ ձեռագիրներ փնտռել, երբ եկեղեցւոյն Տ. Սարգիս քահանան ինձի յանձնեց ձեռագիր ատարակ մը, մեծադիր 10 թերթերէ բաղկացած :

* * *

Ահա այս ձեռագրի մուտքը .

ԱՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Համար գեոմետրիայի արհեստի եկեղեցւոյն հասցէն յանձն արհեստի Գեորգայ ի Փիլիպպոպոլս, եւ եւ անոնք ժողովրդեան Գեորգայոյ :

Ի նախին քաղաքի ընթացիկին արհեստից, է հազար հարիւր ասն եւ ձեռք . Բաւարիոսիան Հայոց, ժողովուրդայնօրնօրն, զՄեթոքայ եպիսկոպոս . եւ գերագլխօրն Աստուծոյ արհեստի եւ վերագլխօրն քաղաքի :

Յով գեոմետրիայ 1828 եւ է Հայոց ՌՄՀԷ յանիւէ 16 ի Փիլիպպոպոլս ընթացիկին Աստուծոյ Գեորգ եկեղեցւոյ :

Այս տետրակը երկու մասի կը բաժնուի . առաջին մասը կը պատմէ Ֆիլիպէի հայ գաղութին ուսկից զալը . եւ թէ անիկա ինչպէս հաստատուեցաւ . Ֆիլիպէ, քաղուած աւելի հին եւ ընդարձակ ձեռագրէ մը իսկ երկրորդ մասը 1829 ին գրուած, կը պատմէ եկեղեցւոյն վերաշինու-

Թիւն: և այդ գործին համար աշխատողներուն գովեստը կ'ընէ:

Ահա առաջին մասին խորագիրը.

«Վիպասանութիւն առման Սուրբ Գէորգ եկեղեցոյ, որ 'ի Մակեդոնիա 'ի Փիլիպպուպոլիս 'ի ձեռաց ազգին յունաց 'ի չորրորդ Սուլթան Մէհմէմէտի 'ի քսան և ևոթնհարող ամի թագաւորութեան նորա՝ Նորին բարձրը հրամանաւ:»

Այս առաջին մասին մէջ կը պատմուի՝ թէ Սուլթան Մէհմէմէտ Բոլոնիա պատերազմի երթալով գրաւեց Գամենից, և իր սովորութեանը համաձայն լեհացոց, ուսաց և հայոց եկեղեցիները մզկիթի փոխարկեց, ու բոլոր բնակիչներն ալ հարկատու ըրաւ:

Գաղաքին հայոց երեւելիները իրենց մէջ խորհուրդ ընելով, թուրք բանակին հետ կերթան Անդրբանուպոլիս. իսկ ննացածները իրենց բոլոր պարագաներով Սուլթանին հրամանով կ'իջնան մինչև սպիտակ (Միջերկրական) ծով, և հոն երեք նաւերու մէջ նստած ծովուն արեւելեան կողմը կուղուին:

Այս երեք նաւերը փոթորիկի հանդիպելով՝ մէկը կերթայ Պոլիս, Ղալաթիա. միւսը Աեւ ծովուն եզերքները, Ահեօլու Պուրղազի գիմաց Սիզէպոլսոյ բերդը. իսկ երրորդը Պոնտոսի գիմաց արէկոծութեան բռնուելով կը քայքայուի և իննըսունըութը հոգի կը խղզուին:

Այն ժամանակները տաճկաց արքունիքին մէջ վաճառականութեան պատճառով նշանաւոր դիրք կունենայ Պէլլըրկատցի Արբահամ Չէլէպի (Ապրո Չէլէպի կոչուած), որ գամենիցցիներուն գլխուն եկած այս աղէտը լսելով շատ կը յուզուի ու կը խոցուի: Ուստի

իրեն կանչելով այդ ժողովուրդին գլխաւորները, որոնք բանակին հետ Անդրբանուպոլիս եկած էին, կը մըխիթարէ. զանոնք և կուտայ չորս հարիւր մանչիլ (գրամ մը որուն տրոփէքը անծանօթ է ինծի) զրկելու համար վտանգուածներուն: Գամենիցցիները դրամը անմիջապէս կը զրկեն թէ՛ Ղալաթիա և թէ՛ Սիզէպոլիս ինկածներուն: Թագաւորը յետոյ հըրաման կընէ որ Գամենիցցի հայեր որքան և ուր որ կը գտնուին թող երթան Մակեդոնիա և հոն իրենց բնակութեան տեղ գտնեն և հոն կենան:

Ապրո Չէլէպիի նպատէն ոգեւորուած Գամենիցցիք իրենց վերակացուներովը ամէն կողմէ կուգան Փիլիպպուպոլիս և հոն զիրար գտնելով կը միխիթարուին. բայց քիչ վերջը համաճարակ մը ինչպէս ուրիշ ազգերէ, իրենցմէ ալ շատ մը զոհեր կը տանի ու խոր սուգի մէջ կը թողու զիրենք:

Այս Գամենիցցի գլխաւորներէն ոմանք կերթան Անդրբանուպոլիս, արքունի գոնէն իրենց համար աղօթատեղի մը ուզելու: Ապրո Չէլէպի պէտք եղած հրահանգը կուտայ անոնց, ինչպէս նաեւ պէտք եղած դիմումները կընէ պալատի երեւելիներուն: Թագաւորը կը հրամայէ որ Փիլիպպուպոլիս գտնուած յունական ութը եկեղեցիներէն մէկը յանձնուի հայերուն: Յոյները թէև կ'ընդգրկմանան, բայց ստիպուած կը յանձնեն իրենց Ս. Գէորգ եկեղեցին:

Եկեղեցին հին ըլլալով նորոգութեան անհրաժեշտ պէտք ունէր. և հայերը նորէն կը դիմեն Ապրո Չէլէպիին որպէս զի օժանդակէ իրենց. սա ալ թէ՛ խօսքով և թէ՛ զրով կը յայտնէ թէ պատրաստ է վճարել ինչ

ծախք որ երթայ, եւ սկզբնաւորութեան համար ալ կանխիկ քիչ մը դրամ կը զրկէ:

Ապրօ Չէլէպիի խոստմանը ապաւինած կը սկսին եկեղեցիին նորոգութեանը, բայց զիս չաւարտած Ապրօ Չէլէպիին կը մեռնի 55 տարեկան, հայոց թուին 1125 ին եւ կը թաղուի Անդրբիանուպօլիս:

Ապրօ Չէլէպիի երկու որդիներն ալ հօրերնուն մահուանը ատեն Ազրիանուպօլիս չեն գտնուիր. մէկը, Սարգիս Չէլէպի, վաճառականութեամբ դացած էր Իտալիա, իսկ երկրորդը Մատթէոս Չէլէպի կը գտնուէր Չմիւսնիա: Այս վերջինը հօրը հրաւէրով Չատկի տօնը միասին անցընելու համար ձամբայ ելած կ'ըլլայ, բայց հօրը մեռնելէն ութ օր ետքը միայն կը հասնի:

Փիլիպպուպօլիս գտնուած Գամբնիցցի ժողովուրդը երբ կիմանայ Մատթէոս Չէլէպիի գալուստը, միութարութեան եւ ցաւակցութեան գիրք մը կը գրէ եւ պատգամաւորութեամբ մը կը զրկէ անոր, չմոռնալով սակայն իր հօրը ըրած բարիքը եւ խոստումը յիշեցնելու:

Մատթէոս Չէլէպի իբր արժանաւոր զաւակ իր հօրը կը քննէ հաշիւները եւ եկեղեցւոյն նորոգութեան համար դացած 1636 մտոչիլը կը վճարէ:

Պատգամաւորները երբ կը վերագաւնան, Փիլիպպուպօլիս հայերը կ'աճապարեն շնորհակալութեան գիրք մը գրելու. եւ անոր հետ մէկտեղ իրենց գլխէն անցածներուն մանրամասն պատմութիւնը կը գրեն եւ կը զրկին Մատթէոս Չէլէպիին:

Մատթէոս Չէլէպի Գամբնիցցիներուն գլխէն անցածներէն շատ ըզգածուած, իրեն եկած տեղեկութիւն-

ները կը զրկէ Պոլիս, հին ընդարձակ ձեռագրի հեղինակին, որ Երեմիա կը կոչուի եղեր:

Ահա վերջարանը առաջին մասին.

« Եւ անձն այն իմաստասէր զայն եղելութիւն ապա 'ի սկզբանէ մինչև ցկատարած գովելի եւ բարձրագոյն աճով ոսկետող շարադրութեամբ նմանութեամբ եւ օրինակաւ զարգարեալ, եւ սիրտական միւթարանս մատուցեալ անձանց այնոցիկ կարօտելոց՝ շարահիւսեալ է ի Հազար հարիւր քսան եւ վեց թիւ Հայոց, եւ յապրիլի ժԳ. ի կոստանդինուպօլիս 'ի յեռամտորան եկեղեցւոյ Ամենատուրք Աստուածածնի եւ միշտ անարատ կուսի:

« Որ արդ համառօտեալ 'ի դիւրութիւն իմացման հասարակօրէն յԱնդրբիանուպօլիս Մեարոպ եպիսկոպոսէ. ի թիւ Հայոց հազար երկու հարիւր եօթանասուն եւ եօթն, եւ 'ի յունիսի վեշտասաներորդ 'ի Փիլիպպուպօլիս:

« Իսկ արդ՝ վերստին առ օրինակեալ սոյն սա ի նոյն օրինակէ անտի, Պետրոս Գպրէ Տէրեայ Ստեփանեան բնիկ Անդրբիանուպօլիսցւոց 'ի թիւ Հայոց ՌՄ Հէ ին:»

Հոս կը վերջանայ Ա. մասը, որ որոշ կերպով կը յայտնէ թէ Փիլիպպէի հայ գաղութը հատուած մըն է լեհական գաղթականութեան՝ ժէ. դարուն եկած հոն հաստատուած:

Փափագելի էր գիտնալ թէ հին մայր ձեռագիրը որո՞ւ քով կը գտնուի արդեօք, որ անշուշտ աւելի ընդարձակ տեղեկութիւններ կուտայ: Գարձեալ, կարգացած չըլլալով Հ. Ալիշանի ռամենիցը, չեմ գիտեր թէ այս մասին ո՞ր եւ է յիշատակութիւն մը ըրած է:

Առ այժմ կը բաւականամ այս սեւ-

զեկութիւնները — ոչ ուսումնասիրութիւն — սալով եւ երբ ամբողջացնեմ խուզարկութիւններս եւ տեղեկութիւններս, պիտի փութամ հրատարակել զանոնք մաս առ մաս Շաբաթ միջոցով:

Վ.Ա.ՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ



ՄԱՀՄՈՒՏ ԲԱԾԱՅԻ

ԲՈՂՈՒԲԸ

Զրոյց կը պարտէր թէ Տամատ-Մահմուտ բաշա զիսաւորութիւն ունի Թուրքիա զանալու: Այս զրոյց կը հերքուի նոյն ինքն Մահմուտ բաշայի կողմէ, որ բողոք մը կուղղէ Սուլթանին դէմ՝ նոր իրատէին առթիւ:

Աւասիկ այդ բողոքը.

Թուրք լրագիրները հրատարակեցին մէկ պաշտօնական ծանուցումը Օսմանեան կառավարութեան: Այս զեկոյց կը ծանուցանէ թէ Սուլթանը որոշած է ջնջել բոլոր քաղաքային իրաւունքները այն թուրքերուն որոնք այժմ Եւրոպա գտնուելով բերանացի ու գրաւոր կերպով կը քննադատեն կառավարութեան արարքները, եթէ անոնք թուրքիա չդառնան մինչև քսան օր որ վերջին պայմանաժամն է: Իրենց քաղաքային իրաւունքներուն ջնջումէն զատ, ստացուածքնին արքունիք

պիտի գրաւուի և նմանօրինակ կարգ մը կեղեքիչ անօրինութիւններ պիտի գործադրուին անոնց դէմ:

Աղղուապէս կը բողոքեմ այս որոշման դէմ որ հակառակ է սկզբբանցը իսլամ կրօնքին որուն կը պատկանիմ, ինչպէս նաև կիւլհանէ — խաթիվը-Հիւմայունի բովանդակութեան որ հրատարակուեցաւ 1839 ին պետութեան կողմէ, միջամտութեամբ ու երաշխաւորութեամբ Եւրոպայի, նոյնպէս սկզբբանցը քաղաքային օրէնքներուն որոնք կը գործադրուին այժմ Եւրոպա:

Կը յայտարարեմ թէ ամէն առան Օսմ. կառավարութենէն պիտի պահանջեմ այն փոփոխութիւններն ու շահերը որոնք իրաւամբ կը պատկանին ինծի կամ ժառանգներուս, և թէ երբէք չպիտի հրաժարիմ իմ օրինաւոր իրաւունքներէս: Ներելի է ինծի Պոլիս չդառնալ ցորչափ Օսմ. կառավարութիւնը յամառի չընդունիլ և չգործադրել թուրքիոյ բարգաւաճմանը հարկաւոր բարեփոխութիւնները. վասն զի անհերքելի կերպով յայտնի է թէ Ապաիւլ-Համիտ, իբրև եղբունագործ նկատելով բոլոր այն պատուազգաց մարդերը որոնք բարեացկամ դատողութիւններ կ'ընեն իր վարչական գրութեան վրայ, ոչ մէկ ճնշողական միջոց կը խնայէ անոնց դէմ, ինչպէս թունաւորումը, տքտրը և սպանութիւնը: Այս կերպով կը վստահեմ մասնա-

ւորապէս մամուլի և ընդհանրապէս մարդոց ազատութիւնը : Այս մասին իմ դիտողութիւններս բոլորովին բարեւէր հանգամանք մը ունենալով, ակնբերե է որ Պոլիս դառնալուս պէս, քանի որ Սուլթանը թշնամի է վրկարար խորհուրդներու, ազատութիւնս ապահովապէս պիտի վտանգուի և գուցէ դատապարտուիմ բանտարկուելու, արտորուելու կամ սպանուելու : Հետեւապէս, Պոլիս չդառնալու արդարացումս կատարելապէս օրինաւոր է :


Ապաիւլ-Համիտի հանդէպ բռնած ընթացքս ապացոյցն է շանքի մը իրեն հասկցներու այն հարկաւորութիւնը զոր ունի կառավարութիւնը ետ կենալու բռնապետական ու բարբարոս ձեռնարկներէն և հետեւապէս մտնալու քաղաքակրթութեան ճամբուն մէջ : Իմ կշտամբանքներս արդարութեան տեսակէտով, ոչ միայն պարտաւելի չեն, այլ և ընդհանուր երախտագիտութեան արժանանալու են, վասնզի եւրոպական աէրութիւններն ալ Ապաիւլ-Համիտի ցոյց տուին բարենորոգումներու գործադրութեան պէտքը իր երկրին մէջ. նոյն իսկ իրենց նաւասարմը մինչեւ Պէշիքա զրկեցին իրեն սպառնալու համար :

Անգամ մը եւս կը յայտարարեմ թէ իմ նպատակս է սոսկ ճշմարտութիւնը ըսել, առանց ո և է թըշնամութեան Սուլթանին անձին դէմ, և թէ իմ յարձակումներս կուզ-

լուին միայն իր ողբալի վարչութեան դէմ : Այսպէս գործերով իրական ծառայութիւն մը կը մատուցանեմ Ապաիւլ-Համիտի ինչպէս նաեւ մարդկութեան : Ուրեմն, փոխանակ բուռն երախտագիտութեան առարկան դառնալու, վարուելու այս եղանակը որ չարագործի մը հանդէպ միայն ներելի է, և մանաւանդ ընդհանուր լռութիւնը որով կընդունուի այս բացարձակ անիրաւութիւնը, ամօթալից արաստով մը կը ծածկեն արդի քաղաքակրթութեան պատմութիւնը :

Յոյժ խրոխտաբար կ'աւելցնեմ որ, ոչ միայն չեմ զրկուիր իմ քաղաքային իրաւունքներէս, այլ ընդհակառակը արժանի կըլլամ զանոնք լիապէս վայելելու :

Ապաիւլ-Համիտ, փոխանակ նորանոր բռնապետական տնօրինութիւններ ստեղծել մտածելու, աւելի աղէկ կընէ բարենորոգումները հրատարակելով :



Յ Ե Ո Ր Ք

Յէլադու է

... . Յ. Խ

Ամառ գիշեր մըն էր. կիսատ լուսընկայ մը արեւելքի հորիզոնէն իր տոգոյն ցոլքերով կը թուլցնէր ազնամուղջը. անհամար աստղեր անամպ երկնքին խորերէն իրենց ազամանդ շիթերը կը կաթեցնէին :

Ամէն բան հանգարաւ էր. ոչ հով կար եւ ոչ շարժում. ծառերը ինչպէս նաեւ կենդանի բոլոր էակները խորունկ քուն մը կը քաշէին. Սեւ ծովը առջեւս կը տարածուէր անպարագիծ ու հանգարաւ:

Ու եւ այդ լուռութեան ու մութ ին մէջ ընկղմուած, բոյրերով ու գիշերուան խոնաւութիւնով լեցուն մըթնոլորտէն գինովցած կը նայէի աստղերուն ու կերպզէի:

— Գուշա՛կ, պարո՛ն, Գուշա՛կ:

Երազներու մէջ ծրագրուած պարիկի մը չնայխարհիկ պատկերը գծագրուեցաւ յանկարծ դիմացս. հասակն երկայն էր, մազերը առատ՝ ուսերուն վրայ ծփծփուն. նուրբ մետաքսէ ձերմակ շապիկը գրեթէ մերկ կը թողուր իրանն ու հարուստ կուրծքը. եւ սաթի պէս սեւ ու հրացայտ աչքերը ուղղելով վրաս ըսաւ.

— Գուշա՛կ, պարո՛ն, Գուշա՛կ:

Ու արեւելքի ատ աղուոր աղջիկը, առանց հրաւերի, ծունգի վրայ նըստաւ առջիս, իր կակուղ ձեռքերուն մէջ առաւ աջ ձեռքս, եւ սկսաւ անոր վրայի գիծերը սերտել:

Անդիմադիր, ու իր մարմինէն բուրոզ անուշահոտութենէն զգլխած թող տուի որ ուզածին պէս խաղայ հետս. իր թաւիչ մատներուն խողրտանքը խօլ սարսուռներ կը յարուցանէր մէջս. քիչ քիչ աւելի կը հակէի ու կը կարծէի թէ այդ աղուոր տեսիլքին մէջ պիտի հալէի ու հատնէի: Պահ մը ձեռքերուս մէջն ու դուրսը նայեցաւ, ու իմ նայուածքս դամուած էր անոր փղոսկրէ կուրծքին մէջ:

— Առաջ անցեալը, պարո՛ն, ըսաւ ան. Սալին շատ վարպետ է. ամէն բան գիտէ. ոգիները անոր տուած են այնպիսի սուր աչքեր որոնցմով ան-

ցեալը կը տեսնէ եւ ապագան կը գուշակէ:

« Մտի՛կ ըրէ.

« Տե՛ս, ի՛նչ մատղաշ տղայ է, խոշոր կապոյտ աչքեր ունի, թիթեռնիկի պէս կը ցատկոտէ ծաղկէ ծաղիկ, այծեամի պէս կը մագլցի քարերն ի վեր, ծիծաղներու մէջ ծնած է ու կը ծիծաղի:

« Բայց ինչո՞ւ կեցաւ յանկարծ. ինչո՞ւ անոր անուշ աչքերը նոր ճառագայթով մը լեցուեցան:

« Ահա հունա՛, աղուոր կնիկ մը կեցեր է. խեղճ տղայ, ինչո՞ւ անոր կը նայիս, ինչո՞ւ վազքդ ու խաղերդ կը դադրեցնես. ան ուրիշինն է. ինչո՞ւ թաթիկներդ կայրես սիրոյ կրակէն...

« Ե՛տ դարձիր, ե՛տ. ատ ճամբան փչոտ է. քու տոտիկներդ չեն կարող գիմանալ սուր քարերու խայթուածներուն:

« Բայց մտիկ չըներ. ու հիմա կուլայ, կուլա՛յ իր առաջին սէրը, իր անիրականալի երազը: »

Պատանեկութեան այս տխուր վերյուշումները արցունքոտեցին աչքերս:

* * *

Սալին քիչ մը հանգչելէ ետքը նուրէն սկսաւ.

— Մեր տղան մեծցած է հիմա. փոխած է իր վայրի տարազն ու միջավայրը. մայրաքաղաքի լայն փողոցներուն, ահագին եռուզեռի մէջէն կը քալէ մինակ, անտարբեր. իր դունասա զէմքը կը մատնէ թէ գեռ չէ մոռցած ամէն բան:

« Բայց ո՞ւր կերթաս ատ կողմէն. ինչո՞ւ կը նայիս ատ մեծ տունին պատուհանն ի վեր. ի՞նչ, միթէ կու-

զես անցեալին բոլոր լացերն ու ցա-
ւերը արթնցնել քու մէջ. լաւ. սեւո-
րակ աչիւր քեզի կ'ըսեն.

« — Եկուր հո՛ս :
« Ու գուն կերթեա . . .

« Ու նորէն կուլայ. վա՛խ, ո՛րչափ
կարճ եղաւ սիրոյ այդ երկրորդ գի-
նովութիւնդ. եւ որչափ սուղ կը վը-
ճարես անոր գինը :

« Ա՛ն ալ գնաց ուրիշին. ու գուն
նորէն ամայութիւններու մէջ կը թա-
փառիս՝ ցաւերդ երգելով : »

Սալին լուց, ու գիտակից բայց
խարուած այդ երկրորդ սիրոյն յիշա-
տակը խոր թախիծով մը համակեց
զիւ :

*
* *

Սալին շարունակեց .

« Աս ո՛ւր է հիմա. մարդերն ու
աշխարհը փոխուած են. ուժգին յոր-
ձանք մը առեր ու նետեր է զայն շատ
հեռուները. ու հոն կը քալէ. մազերն
արդէն ճերմկիւ սկսած են, եւ կեանքի
տուայտանքը ժամանակէն շատ առաջ
խորշոմներ ակօսած են անոր երեսին
վրայ . . . Քալէ՛, որչափ կուղես քալէ,
բայց մի նայիր չորս կողմդ. ինչո՛ւզ
պէտք են ազուոր հասակները, խու-
մար աշուկները, լեցուն կուրծքերը,
քեզի՞ ինչ :

« Բայց ո՞վ մտիկ կ'ընէ :

« Անդին մատաղ աղջիկ մը կայ :
Անոր սեւ ու կրակոտ աչքերը կը մո-
գեն քեզի, անոր մետաքսէ երկար
մազերը կը կաշկանդեն հոգիդ. անոր
ճերմակ ու փողփողուն լանջքը կը
թարմացնէ սիրադ. ու գուն կը նեա-
ուիս անոր . . .

« Ինչո՞ւ գացիր : »

Սալին լուց :

Սիրտս ուժգին կը պոռթկար. հար-
ուածը ուղղակի իջած էր : Սալին
ճիշդ պատմած էր անցեալը եւ ճիշդ
կը գուշակէր ներկան :

Ու տեսնելով որ անոր լռութիւնը
կերկննար, եւ սպասումէ կը հասնէի,
գրեթէ աղաչանքով մը ըսի .

« Պիտի սիրէ՞ զիս, պիտի սիրէ՞ :

Սալի ոտքի ելաւ եւ ըսաւ .

« Ճիշդ գուշակեցի՞, պարոն :


Անոր ոտքերուն փարած կրկնեցի .

« Սա՛լի, պիտի սիրէ՞ զիս ատաղ-
ուոր, աղջիկը :

Սալին թեթեւ մը ցնցուեցաւ, իր
պարիկի հասակը աւելի երկնցաւ եւ
ծովանուշի զէմքը աւելի ճառագայ-
թեցաւ, եւ բարձրացող լուսնին շա-
ռայլներուն մէջ հալեցաւ ըսելով .

« Ճնո՛րք, ցնո՛րք, ամէնքն ալ
ցնորք . . .

ԵՐՈՒՍՁ



ԲԱՆԱՍԻՐ

Հանդէս հնախօսական, պատմա-
կան և քննական. կը հրատարակ-
ուի երեք ամիսն անգամ մը, տա-
լեկան չորս գիրք :

Տնօրէն՝

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

Կ'աշխատակցին ազգային և օտար
արևելագէտներ :

Հրատարակուեցաւ Բ. հատորին
Ա. պրակը :

Տարեկան գինն է 20 Ֆր.

Отговорникъ Н. Драгулевъ

Печатница «Ориенталъ» — Варна.

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՈՒԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

Վարժարանիս աշակերտ ապւ փափարող Պատուարժան ծնողաց կը յայտարարեմ որ Հայկական Կրթարանի Գ. տարեշրջանը կը սկսի յառաջիկայ Սեպտեմբեր 1/14 ին, միեւնոյն ընդարձակ և օգտաւն շէնքին մէջ, առանց փոփոխման ծրագրի, և աջակցութեամբ միեւնոյն ուսուցչական մարմնոյն, որուն պիտի ընկերանայ նաեւ Փռանաացի ընդհանուր հսկող մը :

Լրացուցիչ դասընթացքի աշակերտներուն համար ուսման առարկաներու մեծագոյն մասը պիտի դասախօսուի Փռանսերէն լեզուով : Դասաւանդութեան միեւնոյն եզանակը, աւելի նեղ սահմանի մէջ ու աստիճանաբար, ի դարձ պիտի գրուի բարձրոյն ու միջին դասընթացքներու համար :

Ուսմանց ու գիտութեանց բոլոր կարեւոր ճիւղերը կ'աւանդուին :

Օտար լեզուներէն պարտաւորիչ են պուլիարերէնը և Փռանսերէնը, իսկ կամաւոր են անգլիերէնը և գերմաներէնը, որոնք պիտի աւանդուին Փռանսերէնով :

Զութակի և գաշնակի դասեր ալ կը տրուին մասնաւոր վճարումներով :

Գիշերօթիկներու համար առողջ սնունդ, կատարեալ մարքրութիւն և ընտանեկան խնամք :

Տարեթոշակներուն համար պատրաստ եմ ամէն զիւրութիւն ընծայել, եթէ անոնց կանոնաւոր վճարումը կանխաւ ապահովուի ո՛ր և է միջոցաւ :

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴԻՐ-ՏՆՕՐԷՆ

ԿՐՕՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Վ. Ռ. Ն. Ա.

Երկրորդ քաղ, Շիրչենսիս փողոց, (Սագալլո լեշմեի կից)

Կը ապագրուին հայերէն, պուլխարերէն, գաղղիերէն, յաւ-
նարէն, տաճկերէն և այլ լեզուներով այցեստան, հաոցէտան,
հարստանեկան հրաւիրագիր, աղգարարութիւն, նամակաղբւխ,
պահարան, մահաղբ, վաճառականական ամէն տեսակ գործեր,
գիրք, քաղիր, և այլն:

Գունաւոր և ոսկեղօծ զարդագործերու համար ամէն լեզուէ
ճոխ տառեր և մասնաւոր գործիքներ կը զանուին:

ՄԵԾ ԽՆԱՄՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻԻՆ

18VIII Ը ՅՈՅԹ ԳԻՐԴԱՄԱՏՅԵԼԻ
VARNY

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ նետ-
քեամք եւ փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).